ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---- »---------- 2017թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 193-Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 304-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 2-րդ կետում «3-րդ կետով սահմանված դեպքի» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի» բառերով.

2) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «Երևանի ենթակայության մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 193-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) 2-րդ կետում «բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի,» բառերը.

2)լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Երևանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

3) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

3. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հունիսի 26-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 472-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 2-րդ կետում «3-րդ կետով սահմանված դեպքի» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի» բառերով.

2) լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:»:

4. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու, լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 304-Ա որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

18 մարտի 2015թ. N 304-Ն

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2013** ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ **25-Ի N 76-Ա** ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի ենթակայության կազմակերպությունները հանձնել Երևանի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածում ընդգրկված կազմակերպությունների մասով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին պարբերությամբ, 2-րդ մասի ա), գ), դ), ե) և է) կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները, բացառությամբ սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերի, պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին, ընդ որում՝ մինչև սահմանված կարգով մրցույթի արդյունքում կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը (նշանակումը) կազմակերպության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը վերջիններս նախապես համաձայնեցնում են Երևանի քաղաքապետի հետ:

3. Երևանի ենթակայության կազմակերպության գործունեության վերահսկողության արդյունքում իրավական ակտերի պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք, համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, հիմք են հանդիսանում կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար, կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:

4. Այն դեպքում, երբ Երևանի ենթակայության կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետին՝ իր հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծելու (պաշտոնից ազատելու) մասին, ապա կազմակերպության գործադիր մարմինը պաշտոնից ազատվում է Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա:

5. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետի 2013թվականի նոյեմբերի 7-ի N5551-Ա որոշումն ու «Աջափնյակի շախմատի դպրոց» և «Դավթաշենի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N76-Ա որոշման 3-րդ կետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2015թ. մարտի 18
Երևան

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի մարտի 18-ի
N 304-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	**Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար**
1.	«Երևանի Աջափնյակի շախմատի դպրոց» ՀՈԱԿ
Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Դավթաշենի շախմատի դպրոց» ՀՈԱԿ
Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար	

1.	«Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Մալաթիա-Սեբաստիա շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Նուբարաշենի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ
Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար	
1.	«Երևանի Քանաքեռ-Զեյթունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

»

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 193-Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 304-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն, 2011 թվականի մարտի 15-ի N 193-Ն, 2012 թվականի հունիսի 26-ի N 472-Ն և 2015 թվականի մարտի 18-ի N 304-Ա որոշումներով Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանն են հանձնվել Երևանի ենթակայության մի շարք ՀՈԱԿ-ներ և ՓԲԸ-ներ (այսուհետ՝ կազմակերպություն) և պատվիրակվել Երևանի քաղաքապետի լիազորություններ, բացառությամբ՝ նշված որոշումների մեջ նշվածների:

Աշխատողի նախաձեռնությամբ կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ընդհանուր հիմքերը, ժամկետները, պայմանագրի կողմերի իրավունքները և պարտականությունները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 110-րդ ու 112-րդ հոդվածներով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նշված օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին:

Նշված օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ նշված հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշանակված օրվանից:

Այսինքն, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված են առանձնահատկություններ՝ գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման ժամկետի հետ կապված և իմպերատիվ նորմով սահմանվել է գործատուի պարտականությունը՝ աշխատողին ազատել (լիազորությունները դադարեցնել) զբաղեցրած պաշտոնից դիմումում նշված օրը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս, աշխատանքային պայմանագրի մի կողմը գրավոր ձևով առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Առաջարկի հետ համաձայնվելու դեպքում մյուս կողմը պետք է յոթ օրվա ընթացքում իր համաձայնության մասին ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին: Եթե կողմերը համաձայնվում են լուծել պայմանագիրը, ապա այդ մասին կնքում են գրավոր համաձայնագիր, որում նշվում են պայմանագրի լուծման ժամկետը և այլ պայմաններ (հատուցումներ և այլն):

Պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ Երևանի ենթակայության կազմակերպության տնօրենը՝ աշխատանքից ազատելու մասին դիմումը ներկայացնի ոչ թե Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարին, այլ Երևանի քաղաքապետին, ընդ որում՝ դիմումի մեջ կարող է նշվել ազատման սեղմ ժամկետ՝ դիմումը ներկայացնելու օրը:

Նման դիմում Երևանի քաղաքապետին ներկայացնելու դեպքում գործնականում հնարավոր չէ ապահովել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարումը Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարի կողմից:

Բացի այդ, նախագծով նախատեսվում է կարգավորել Երևանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների կառավարմանը ներկայացվող միասնական պահանջները և մոտեցումները:

Ուստի, նշված հարցերի կարգավորման անհրաժեշտությունից ելնելով և Երևանի ենթակայության կազմակերպությունների տնօրենների՝ դիմումում նշված օրվանից պաշտոնից ազատվելու իրավունքի իրագործման նպատակով Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 193-Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 304-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն, 2011 թվականի մարտի 15-ի N 193-Ն, 2012 թվականի հունիսի 26-ի N 472-Ն և 2015 թվականի մարտի 18-ի N 304-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 182-Ն, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 193-Ն, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 472-Ն ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 304-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N 182-Ն, 2011 թվականի մարտի 15-ի N 193-Ն, 2012 թվականի հունիսի 26-ի N 472-Ն և 2015 թվականի մարտի 18-ի N 304-Ա որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ